



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2020 թ.

«ՖՈՐՏՈՒՆԱ» ԼՈՒՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ  
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԹՂԹԱՊԱՆԱԿ»  
ՀԱՂՈՐԴՄԱՆ ՀԵՂԻՆԱԿ Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ  
/ankarapetyan88@gmail.com/

Ձեր 12.02.2020թ. էլեկտրոնային հարցմանը.

Հարգելի տիկին Կարապետյան

Ձեր 1-ին հարցին պատասխանում եմ, որ ՀՀ կառավարության 19.09.2002թ. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1789-Ն որոշմամբ Լոռու մարզպետարանի «ներդրումային բաժին» գոյություն չունի, հետևաբար այդ հարցին առնչվող հարցադրումներին պատասխանել հնարավոր չէ:

Ինչ վերաբերվում է 2-րդ հարցին, ապա հայտնում եմ Ձեզ, որ նշված տեղեկատվությունը հնարավոր չէ տրամադրել, հիմք ընդունելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 131 և 134 հոդվածները, այն է՝ «աշխատողի անձնական տվյալները չհայտնել երրորդ անձանց՝ առանց աշխատողի գրավոր համաձայնության»:

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգանքով՝

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ